

5.9. Ստանդարտացումը, սերտիֆիկացումը և հավատարմագրումը 2005թ. հունվար-հունիսին

Ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ամփոփ տեղեկատվության, 2005թ. հունվար-հունիսին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով:

Ստանդարտացում: Ընդունվել և պետական գրանցում է ստացել ազգային 240 ստանդարտ: ՀՀ տարածքում գործադրվել են 174 միջպետական, 54 միջազգային և 12 ՀՀ ստանդարտներ: Պետական գրանցում է ստացել արտադրանքի վերաբերյալ ՀՀ տեխնիկական 166 պայման: Թողարկվել է 3 անուն տեղեկատվական նյութ:

Սերտիֆիկացում: Տրվել է համապատասխանության 3871 սերտիֆիկատ, որից 3460-ը՝ ներմուծվող, 125-ը՝ արտահանվող արտադրանքի համար, մնացած 286-ը տրվել է ՀՀ-ում արտադրվող սերիական արտադրանքի համար: Մերժվել է արտադրանքի սերտիֆիկացման 6 հայտ, որից 3-ը՝ արտադրանքի անհամապատասխանության պատճառով:

Հավատարմագրում: ՀՀ տարածքում հավատարմագրվել է սերտիֆիկացման 3 մարմին և 4 լաբորատորիա (4-ը՝ տեխնիկապես իրավասու և անկախ):

Ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման գործունեության հիմնական ցուցանիշները

	2005թ. հունվար-հունիս			
	ընդամենը, միավոր	հավելածը (նվազումը «-» նշանով) 2002թ. հունվար-հունիսի համեմատ, %	հավելածը (նվազումը «-» նշանով) 2003թ. հունվար-հունիսի համեմատ, %	հավելածը (նվազումը «-» նշանով) 2004թ. հունվար-հունիսի համեմատ, %
Ընդունված և պետական գրանցում ստացած ազգային ստանդարտների քանակը	240	5.2 անգամ	83.2	2.5 անգամ
Պետական գրանցում ստացած տեխնիկական պայմանների քանակը	166	15.3	7.8	- 10.8
Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը	3	- 40.0	- 40.0	- 57.1
Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը	3871	58.5	72.4	20.6
որից				
ներմուծվող արտադրանքի համար	3460	80.4	2.0 անգամ	25.8
արտահանվող արտադրանքի համար	125	- 29.4	- 49.0	- 16.7
Արտադրանքի սերտիֆիկացման մերժված հայտերի քանակը	6	- 45.5	- 33.3	- 33.3

Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանք: 2005թ. հունվար-հունիսին անորակության պատճառով չեն սերտիֆիկացվել ներմուծված և ՀՀ-ում արտադրված արտադրանքի մի շարք տեսակներ:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքը, 2005թ. հունվար-հունիս

Երկիրը	Արտադրանքի անվանումը	Արտադրանքի մոդելը, տիպը	Քանակը
Հայաստան	Սեղանի գազավորված հանքային, բուժիչ ջուր «Ջերմուկ-Էտալոն»	2201	սերիական արտադրություն
Հայաստան	Մակարո «Նարինե Ռադուժնի» պատիճներով	040390	սերիական արտադրություն
Ռուսաստանի Դաշնություն	Շոկոլադե սալիկներ	1806	288 կգ
Իտալիա	Վաֆլի շոկոլադե	1905	149.6 կգ